ՕԺԱՆԴԱԿ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

Օժանդակ տեխնոլոգիան ընդհանրացնող եզրույթ է այն գործիքների համար, որոնք օգնում են բարձրացնել, պահպանել կամ բարելավել մարդու ճանաչողական և հաղորդակցության ունակությունները, լսողությունը, շարժունակությունը, ինքնասպասարկումը կամ տեսողությունը: Օժանդակ տեխնոլոգիաների նպատակն է խթանել անհատների առողջությանը և բարեկեցությանը և ներգրավել կամ նպաստել նրանց մասնակցությանը առօրյա գործունեության մեջ:

Հաղորդակցման սարքերը, որոնք նաև հայտնի են որպես Ընդլայնող այլընտրանքային հաղորդակցության սարքեր (AAC), բարելավում են մարդկանց արտահայտվելու ունակությունը՝ առանց ապավինելու բանավոր խոսքին: Օժանդակ համակարգերը, ինչպիսիք են նկարների վահանակները, խոսք գեներացնող սարքերը և սմարթֆոնների հավելվածներն անգնահատելի գործիքներ են հաղորդակցությունը բարելավելու համար:

Շարժունակության տեխնոլոգիան օգնում է ֆիզիկական հաշմանդամություն ունեցող անձանց և կարող է ներառել քայլակներ, անվասայլակներ, ձեռնափայտեր և օրթոպեդիկ սարքեր: Այն կարող է ներառել նաև հատուկ մկնիկ կամ ստեղնաշար նրանց համար, ովքեր ունեն ձեռքի սահմանափակ շարժունակություն:

Լսողության օժանդակ տեխնոլոգիան կարող է զգալիորեն բարելավել լսողության խնդիրներ ունեցող մարդկանց կյանքը: Կախված մարդու կարիքներից՝ օժանդակ տեխնոլոգիաները կարող են տարբերվել և ներառել ենթագրերով հեռախոսներ կամ հավելվածներ, լսողական սարքեր, դռան ահազանգման սարքեր և այլն:

Օժանդակ տեխնոլոգիաների տեսակները

Տեսողության օժանդակ տեխնոլոգիան օգնում է տեսողության կորուստ կամ հաշմանդամություն ունեցող մարդկանց: Նման օժանդակ միջոցների որոշ օրինակներ կարող են ներառել էկրանի ընթերցիչ, էկրանի խոշորացույց, բրայլյան ժամացույցներ և բրայլյան տպիչներ

Ճանաչողական միջոցները օգնում են մարդկանց կատարել ֆունկցիոնալ առաջադրանքներ բնական միջավայրում: Որոշ օրինակներ ներառում են ձայնագրիչներ, էլեկտրական օժանդակ սարքեր՝ հիշողության ազդանշանների համար, սարքեր՝ ձայնային գրություններ կատարելու համար և շատ այլ գործիքներ:

Ինքնասպասարկումը անհատի կարողությունն է կատարել առօրյան կենսական գործերը կամ վարել անձնական գործունեությունը: Ինքնասպասարկման օժանդակ տեխնոլոգիաները ներառում են բարձր աթոռներ լոգանքի, խնամքի և զուգարանի համար, ինչպես նաև կերակրման սարքերը:

Հիմնական փաստեր

- Տարբեր հաշմանդամություն ունեցող անձինք և ծերացող բնակչությունը կարող են օգտվել օժանդակ տեխնոլոգիաներից :
- Օժանդակ տեխնոլոգիա օգտագործող շատ մարդկանց կարող է անհրաժեշտ լինել մեկից ավելի տեսակի օգնություն :
- Շատ մարդիկ, ովքեր կարիք ունեն օժանդակ տեխնոլոգիաների, չունեն դրանց հասանելիությունը:
- Ֆինանսավորման աղբյուրները տարբերվում են՝ կախված անհատի հաշմանդամությունից և օժանդակ տեխնոլոգիայի կարիքներից:

DDS Department of Developmental Services